ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ֆ. ՖԵՅԴԻ, ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՁԵՌՆԱՐԿ

Frédéric Feydit, Manuel de langue arménienne (Arménien occidental moderne) Le edition revue et augmentee, Paris, Editions Klincksieck, 1969, 394 pages.

Ֆրեդերիկ Ֆեյդի, Հայոց լեզվի ձեռնարկ (արդի արևմտահայերեն), 2-րդ բարեփոխված և լրացված հրատարակություն, Փարիզ, Klincksieck *հրատարակչություն, 1969, 394 էջ։*

Փարիզի արևելյան կենդանի լեզուների դպրոցի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ֆրեդերիկ Ֆեյդին Եվրոպայի ամենանանաչված և հեղինակավոր հայագետներից է։

Ծնվել է Փարիզում 1908 թ.։ Միջնակարգ կրթությունն ստանալուց հետո նա տարվում է արևելագիտությամբ և շատ չանցած նվիրվում հայագիտությանը։ 1931—1933 թթ. հաճախում է Փարիզի արևելյան կենդանի լեզուների ազգային դպրոցը, որի հայագիտական ամբիոնի հիմնադիրն ու առաջին դասախոսը եղել է Շահան Ջրպետը (1798 թ.)։ Աշակերտելով հայտնի հայագետ Ֆրեդերիկ Մակլերին, նա հաջողությամբ ավարտում է հայերենի դասընթացը՝ սովորելով գրաբար, աշխարհաբար, ուսումնասիրելով հայոց պատմություն, աշխարհագրություն և հայ գրականություն։ 1932—1933 թթ. նա միաժամանակ հաճախում է հայագետ Լուի Մարիեսի գրաբարի դասընթացներին։ Լսել է նաև մեծանուն լեզվաբան ու հայագետ Անտուան Մեյեի դասախոսությունները հայերենի պատմա-համեմատական քերականության վերաբերյալ։ 1933-1936 թթ. Ֆր. Ֆեյդին պաշտոնավարում է Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում՝ դասավանդելով ֆրանսերեն լեզու։ Այստեղ նա է՛լ ավելի է խորացնում իր գիտելիքները գրաբարի և արևմտահայերենի բնագավառում։

Իր գիտական գործունեության ընթացքում անվանի հայագետը տարբեր ժամանակներում հայերեն և ֆրանսերեն լեզուներով լույս է ընծայել լեզվաբանական, պատմագիտական, գրականագիտական և հայ բանահյուսությանը վերաբերող բազմաթիվ ուսումնասիրություններ ու հոդվածներ, որոնք արժեքավոր ներդրում են հայագիտության գանձարանում։ Նրա գրչին է պատկանում նաև «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի ֆրանսերեն սքանչելի թարգմանությունը, որ նա կատարել է «Յունեսկոյի» հանձնարարությամբ։ Նա այժմ զբաղված է ամբողջացնելու և ավարտելու հայկական ժողովրդական հավատալիքներին՝ հմայիլներին նվիրված և ֆրանսերեն լեզվով շարադրված արժեքավոր ուսումնասիրությունը։

Հայոց լեզվով ու հայագիտությամբ խանդավառված երիտասարդ գիտնականը դեռ Վենետիկում պաշտոնավարելու տարիներին շատ լավ ըմբռնում էր, որ Եվրոպայում հայագիտությունը զարգացնելու, այն ամուր հիմքերի վրա դնելու, մանավանդ՝ հայագիտությամբ զբաղվել ցանկացող օտարազգի գիտնականներին, ինչպես նաև ոչ հայախոս երիտասարդ հայ սերնդին օգնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ունենալ գիտական, մեթոդապես անխոցելի հայոց լեզվի մի ձեռնարկ։ Եվ ահա, 1935 թ. ֆրանսերեն լեզվով լույս է տեսնում հեղինակի անդ-

րանիկ աշխատությունը՝ նվիրված արևմտահայերենի գործնական քերականությանը՝ „Grammaire de la langue armenienne moderne, dialecte occidental" (200 էջ)։

Սակայն որքան էլ քերականությունը գործնական բնույթ կրեր, այն վերջին հաշվով մնում էր քերականություն և չէր կարող կատարել այն ծառայությունը, որ նպատակ ուներ իրագործելու հեղինակը։ Ուստի և հետագայում նա ձեռնամուխ է լինում կազմելու մի այնպիսի ձեռնարկ, ուր քերականական նյութերը մատուցված լինեն ոչ թե «ավանդական» հերթականությամբ՝ *գոյականից* մինչև *ձայնարկություն*, այլ այն հաշվով, որպեսզի հենց առաջին դասերից սովորողը կարողանա գործնականորեն յուրացնել տրված նյութը՝ կարդալով, թարգմանելով ու կազմելով պարզագույն նախադասություններ։ Երկար տարիների քրտնաջան աշխատանքը վերջապես պսակվում է հաջողությամբ, և նա 1948 թ. հրատարակում է նախորդից իր բնույթով բոլորովին տարբեր մի նոր աշխատանք՝ „Manuel de la langue arménienne. Arménien occidental moderne» (Ձեռնարկ հայոց լեզվի. արդի արևմտահայերեն, 342 էջ)։ Այս նոր ձեռնարկում դասերին կից տրվում են ընթերցանության համար համապատասխան հատվածներ, բառացանկեր, բազմապիսի վարժություններ ու հանձնարարություններ։ Ներկայացվող ու բացատրվող քերականական նյութերը այստեղ ինքնանպատակ չեն, այլ ծառայում են ընթերցանության հատվածներում արտահայտված քերականական իրողությունների լուսաբանմանը։ Լեզվական գիտելիքների մատուցման այս եղանակով սովորողը միաժամանակ ձեռք է բերում և՛ տեսական, և՛ մանավանդ գործնական բնույթի գիտելիքներ՝ ժամանակից շուտ վայելելով դեռ անծանոթ համարվող լեզվով կարդալու, գրելու և խոսելու շատ հասկանալի հաճույքը։

Ճիշտ մեկ տարի հետո, 1949 թ., Ֆրեդերիկ Ֆեյդիին շնորհվում է պրոֆեսորի կոչում, և նույն տարին էլ Փարիզի արևելյան կենդանի լեզուների դպրոցում նշանակվում է հայագիտական ամբիոնի փոխարինող դասախոս, այնուհետև ամբիոնի վարիչ, որտեղ և պաշտոնավարում է մինչև օրս։ Այսպիսով, հեղինակին հնարավորություն է ընձեռվում ստուգել ու քննել իր կազմած դասագրքի գիտական, գործնական ու մեթոդական արժանիքները։ Անշուշտ արդյունքը պետք է որ գոհացուցիչ լիներ, քանի որ հրապարակի վրա է այդ նույն ձեռնարկի երկրորդ՝ բարեփոխված ու լրացված հրատարակությունը։

Տեղին է նշել, որ թեև այս աշխատությունը անվանված է ձեռնարկ, սակայն նրանում ամփոփված են արևմտահայերենի քերականական բոլոր իրողությունները, ճիշտ է, ոչ թե «ավանդական» հերթականությամբ, այլ գործնական նպատակներից բխող հերթականությամբ։ Հեղինակին հաջողվել է խելացիորեն զուգակցել «հեշտից դժվարը» սկզբունքը «առավել անհրաժեշտի ու գործածականի» սկզբունքին։ Այդ է պատճառը, որ երբեմն հենց առաջին դասերից բացատրվում են քերականական այնպիսի իրողություններ, որոնք թեև կարող են դիտվել որպես «դժվարըմբռնելի», սակայն նպաստում են այն բանին, որ հենց առաջին դասերից սովորողը ի վիճակի է լինում կազմել անվանական պարզ նախադասություններ (երկրորդ դասից սկսած)։ Հեղինակը առաջաբանում նշում է, որ հրատարակչական դժվարությունների պատճառով հնարավոր չէր առանձին-առանձին լույս ընծայել արդի արևմտահայերենի գիտական քերականություն և ուսումնական ձեռնարկ, ուստի և նախապատվությունը տվել է ձեռնարկին։ Չէ՞ որ ամեն մի լեզվաբան, արևմտահայերենի քերականական այս կամ այն հարցով հետաքրքրվելու դեպքում, կարող է գրքի վերջում զետեղված քերականական նյութերի ցանկից գտնել այն, ինչ իրեն անհրաժեշտ է։

Այս հրատարակությունը բարեփոխված է և լրացված: Բարեփոխության պատճառները հեղինակը բացատրում է նրանով, որ քսան տարվա ընթացքում (առաջին հրատարակությունը 1948 թ. էր) լեզուն զարգացել է. այն, ինչ դեռ քսան տարի առաջ լեզվական միտում էր, այսօր դարձել է օրենք, և նոր լեզվական միտումներ են երևան եկել: Սա միաժամանակ նշանակում է, որ հեղինակի 1935, 1948 և 1969 թթ. հրատարակած հիշյալ աշխատանքների համեմատական քննությունը կարող է արժեքավոր տվյալներ ու փաստեր տալ հայոց լեզվի պատմությանը՝ արևմտահայերենի զարգացման համեմատաբար կարճ այս ժամանակաշրջանի վերաբերյալ: Բարեփոխումների պատճառներից մեկն էլ այն է, որ Ֆեյդին դասավանդման արդյունավետ քսան տարիների ընթացքում ճշտել ու լրացրել է որոշ կանոններ ու բացատրություններ, ավելի հստակ ու լուսաբանված ներկայացրել արևմտահայերենի քերականության առանձին հարցեր: Աշխատանքը ավելի ճոխացված ու լրացված է, քանի որ հեղինակը նոր փաստեր ու բացատրություններ է ներկայացրել, գիտական նոր դրույթներ արձանագրել:

Հարկ է նշել, որ նա, սուր դիտողունակությամբ, ի հայտ է բերում ու ներկայացնում արևմտահայերենի այնպիսի քերականական նրբություններ, որոնք սպրդել են հայ հետազոտողների ուշադրությունից և որոնք սովորաբար ավելի տեսանելի ու նկատելի են լինում օտարազգի լեզվաբաններին:

Ձեռնարկը բաղկացած է 44 դասերից: Ընթերցանության նյութերն ընտրված են այնպես, որ հնարավորին չափ շատ տեղեկություններ հաղորդեն Հայաստանի պատմության, աշխարհագրության և մշակույթի վերաբերյալ: Հեղինակը ոճական բնույթի բացատրություններ է տալիս բոլոր այն դեպքերում, երբ վտանգ կա, որ ուսանողը կարող է ֆրանսերենի լեզվական կաղապարով ներկայացնել հայերենի այս կամ այն բառակապակցությունը կամ նախադասությունը: Ձեռնարկի վերջում կան բազմապիսի ցանկեր, որոնք օգնում են սովորողին հեշտությամբ գտնելու իրեն անհրաժեշտ տեղեկությունները (1. քերականական նյութերի, 2. ընթերցանության նյութերի՝ խմբավորված ըստ բովանդակության՝ աշխարհագրություն, պատմություն, արվեստ և գրականություն և այլն, 3. անկանոն բառաձևերի կամ կիրառական դժվարություն ներկայացնող բառերի):

Կարելի է վստահ ասել, որ այս ձեռնարկը արևմտահայերենի լավագույն ձեռնարկներից մեկն է:

Ցանկալի է, որ արդի արևելահայ գրական լեզվի համանման մի ձեռնարկ ունենանք՝ հայերենով հետաքրքրվող ռուսախոս ուսանողության համար:

Հիշյալ ձեռնարկի բարեփոխված ու լրացված հրատարակությունը նոր, արժեքավոր ներդրում է արևմտահայերենի ուսումնասիրության բնագավառում և մի անփոխարինելի նպաստ՝ Եվրոպայում հայագիտության հետագա զարգացման համար:

Գ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ